ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ՝ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գործուղվող անձը՝ Կարեն Նազարյան, ԱԳ նախարարի տեղակալ, պատվիրակության ղեկավար:

Գործուղման վայրը և ժամկետը՝ Բրյուսել (Բելգիայի Թագավորություն), 2018թ. հունվարի 22-25-ը:

Գործուղման նպատակը՝ ՀՀ-ԵՄ Շարժունակության շուրջ գործընկերության (ՇՇԳ) 2-րդ բարձրաստիճան հանդիպման մասնակցություն:

Ս.թ. հունվարի 23-ին Բրյուսելում կայացավ ՀՀ-ԵՄ Շարժունակության շուրջ գործընկերության երկրորդ բարձրաստիճան հանդիպումը:

ՀՀ պատվիրակությունը ղեկավարում էր արտաքին գործերի նախարարի տեղակալ Կարեն Նազարյանը: Պատվիրակության կազմում էին ԱԳՆ, ՏԿԶՆ Միգրացիոն պետական ծառայության, ԱՍՀՆ Զբաղվածության պետական գործակալության, ԵՄ-ում ՀՀ ներկայացուցչության աշխատակիցներ:

ԵՄ պատվիրակությունը գլխավորում էր Ներքին գործերի, միգրացիայի և քաղաքացիության հարցերով գլխավոր տնօրինության Ռազմավարության և ընդհանուր հարցերով ղեկավար Մարթա Սիգանը: ԵՄ կողմից ներկա էին նշված տնօրինության, Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության, անդամ պետությունների՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Սլովակիայի, Բուլղարիայի, Շվեդիայի, Բելգիայի, Իտալիայի, ինչպես նաև ԵՄ այլ կառույցների և միջազգային և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Կողմերը քննարկեցին Շարժունակության շուրջ գործընկերության շրջանակներում Հայաստանում իրականացվող ծրագրերը, ուղենշեցին ապագա առաջնայնությունները: Երկուստեք փաստվեց մի շարք ոլորտներում, մասնավորապես սահմանային կառավարման, վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման, միգրացիայի և զարգացման բնագավառներում հաջող նախագծերի փորձը:

Նախարարի տեղակալ Նազարյանն իր ելույթում շեշտեց դեռևս 2014թ-ից ուժի մեջ մտած մուտքի արտոնագրերի դյուրացման և հետընդունման համաձայնագրերի իրականացման հաջող ընթացքը, կարևորեց ԵՄ հետ վիզաների ազատականացման շուրջ երկխոսության հնարավոր մեկնարկը, որն արտացոլված է ՀՀ-ԵՄ երկկողմ, ինչպես նաև Արևելյան գործընկերության բազմակողմ փաստաթղթերում: Հայկական

կողմից ներկայացվեց մի շարք առանցքային ոլորտներում իրավական և կարգավորիչ դաշտին առնչվող վերջին զարգացումները, նշվեց բարեփոխումների շարունակականությունն ապահովելու պատրաստակամության մասին:

ՀՀ կողմից ներկայացվեց նաև «Աջակցություն միգրացիային և սահմանային կառավարմանը» ծրագիրը, որն իրականացնում է Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան ներկայացուցչությունը, Շվեդիայի զբաղվածության գործակալության հետ համատեղ իրականացվող ծրագրերը և այլն: Առաջնայնությունների մասով առանձնացվեցին փաստաթղթերի անվտանգությունը, սահմանների կառավարումը:

ԵՄ կողմից ներկայացվեցին մի շարք ուղղություններով՝ միգրացիոն կառավարում, ապաստանի քաղաքականություն, թրաֆիկինգի դեմ պայքար վերջին զարգացումները:

Քննարկվեց նաև ՇՇԳ համակարգման առավել արդյունավետ համակարգի հարցը: Հիմնվելով Մոլդովայի օրինակի վրա, որն առավել է առաջադեմ է համարվում ԱլԳ երկրների մեջ, առաջարկվում է համակարգման երկու օղակ՝ Բարձրաստիճան հանդիպումներ և Տեղական համագործակցության հարթակ: Նախատեսվում է նաև առցանց տեղեկատվական հարթակի ստեղծում, ուր կներառվի բոլոր ծրագրերի մասին տեղեկատվությունը:

Կարեն ՆԱՋԱՐՅԱՆ

31.01.2018